Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17.597

Թիֆլիզի Հրատարակչ. Ընկերութիւն

№ 14

ՍԻՐՈՅ-ՀՈՎԻՏԸ

ԵՐՏԱԿ ԵՊՌԵՍԵԱՆ

ԹԻՖԼԻԶ
Տպ. Մ. Վարդանեանի
1904

891.99
Ա-26

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ

տպագրութեան յարմար գրուածքներ — վիպական, ժողովրդականացրած գիտական, առողջապահական, պատմական, գիւղատնտեսական, մանկական և այլն. գրուածքները լինելու են 1—2 տպագրական թերթի ծաւալով

Հեղինակների և թարգմանիչների վարձատրութեան չափը որոշում է «Ընկերութիւնը»։

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

Գիրք տարածող գործակալներ՝ բաւական ձեռնտու պայմաններով։ Պայմանների հետ մանրամասն ծանօթանալ ցանկացողը պէտք է ուղարկէ նամակադրոշմ Գործակալների անունները կայտարարուեն թէ գրքեր ի վերայ և թէ թերթերում։

ՀՍԻ-ՀՑ
Ա-26
862
06 DEC 2010
24 MAY 2005

Թիֆլիսի Հրատարակչ. Ընկերութիւն

РА
27841

№ 14

ՍԻՐՈՅ-ՀՈՎԻՏԸ

ԱՐՇԱԿ ՕՐԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպ. Մ. Վարդանեանի
1904

JAN 2013

17597

Дозв. Ценз. 11 мая 1904 г., г. Тифлисъ.

1566-98

ՍԻՐՈՅ-ՀՈՎԻՏԸ

I.

—Ահա երջանկութիւնը, այն, որին ձըգտում են հասնել ամենքը, բայց շատ քչերը միայն չեն փակում իրանց աչքերը ծիածանագոյն սանդուղքի առաջ՝ նրա երփներանգ փայլից սարսափած,—ասում էր Գիւլ-Խանումն իր սիրելի դէրվիշին՝ գլուխը նրա ուսին յենած, ձեռը ձեռին տուած։—Անկարելի է հասկանալ մարդիս այն տրտունջը, թէ «տառապանքը մտաւ հոգուս խորքը». աւելի ճիշտ կլինէր ասել, թէ «ես որոնեցի և գտայ այն՝ դատարկ կրծքիս տակ բնակեցնելու համար»։ Արձակիր նետդ բաց եթերի մէջ. մինչև նա կիջնէ երկնքից և կպատառոտէ կուրծքդ, կարող ես խոյս տալ շատուշատ հեռու, և նա գլորուելով ժայռ-քարի վրայ՝ կջարդուէ իր սուր ծայրը, իսկ դու... ազատ ես... թռչ թռչէ երևակայու

թիւնդ՝ ուր որ կամենայ, սլանայ հեռո՛ւ, որքան կուզես՝ հեռո՛ւ, բայց ո՛չ դէպի մութը։ Դիտիր շուրջդ, որքան սիրտդ տայ, բայց մի՛ տեսնիր սեր. կեանքն ու սարսափը թշնամիներ են։ Դէրվի՛շ, մի՛թէ դու ես ինձ նման չես մոռանում ամբողջ աշխարհը, քեզ նոյնիսկ, երբ այնպէս մեղմիկ իրար են հպում մեր շրթունքները. մի՛թէ քեզ ես երազ չեն թւում այն գանգատները, որ մենք անընդհատ լսում ենք մարդից, երբ այդ կրակոտ աչքերդ հոգուս խորքն են թափանցում. մի՛թէ գերեւելու ընդունակ չեն նրանք։ Դէրվի՛շ, ով դէրվի՛շ, դու աստուածային ոգով ներշնչուած՝ շատշատ ես թերթել սրբազան գրքեր, երազում անկասկած շատ ես վերացել դէպի Անհասի բնակավայրը և յաճախ ճեմել դրախտի խորքերում. սա՛ ինձ հիշտը, գուցէ տեսել ես այն հառաչանքից զուրկ աշխարհներում ինձնից կերազոյնը... Նայիր արեւին, նա մեզ համար է փայլում երկնքից. այն թուչնիկն անգամ, որ ճիւղին թառած՝ իր խենթուկ խենթուկ տաղերն է կարդում, մեր երջանկութեան երգերով է նա իր սիրտը կրակում. Հեռո՛ւ մոայլից, հեռո՛ւ արցունքից, որի ամենամի սև կաթիլի մէջ հոգսի ու ցաւի մի

ծով է ծփում...

—Իսկ եթէ ուզում ես հեռու մնալ, բայց ուղեղդ չդիմա՛ցում է հոգիդ սև խոհերի հետ, հառաչեց հիւանդոտ դէրվիշը.—իսկ եթէ մի աներևոյթ ձեռ՝ ուր որ էլ փախչես՝ չանթո՛ւմ է քեզ ամեն կողմից իր անտեսանելի սուր սլաքներով. իսկ եթէ երևակայութիւնդ թըռչում է հեռո՛ւ, աւելի՛ հեռու, քան կցանկանայիր, և հասնում մի խաւա՛ր, անյայտութեան քողով ծածկուած աշխարհ, որից դէնն անցնել չէ կարողանում, ետ դառնալու էլ իրաւունք չունի, էլ թոյլ չե՛ն տալիս... Ո՞ւր է այն անկիւնը, որ կարողանար հալածուած միտքը դուլդապար առնել, կանգ առնէր լոյսի մէջ և էլ չթափառէ՛ր, չթափառէ՛ր...

—Մի՛թէ չէ կարող մտքիդ հանգիստ տալ այս սքանչելի Սիրոյ-Հովիտը. ո՞ւր է այն խորը, որ կարողանայ մրցել սրա հետ կատարելութեամբ. ի՞նչ փառաւոր են, նայիր, այս ձրդուղ սարալանջերը, և ո՞րտեղ այնքան սրտեր են բացուել զոհունակութեամբ, որքան այս սիրոյ երկրի գեղազարդ դալար կրծքի վրայ։ Ասում ես՝ «սէրը փչոտ է լինում», գուցէ և ճիշտ է, բայց ո՛չ եղեմում.—Սիրոյ-Հովի՛տը...

ինչո՞ւ սա պէտք է տառապանքների վկայ էլ դառնայ. սրա համար այն ամենն, ինչ աշխարհ է եկել խուլ հառաչանքով, խորթ ու հեռո՛ւ է, որպէս Տիրոջ դահին սև տարտարոսը.—պանծալի երկինք, հիասքանչ մամռապատ ժայռ-պահապաններ, փառահեղ անտառներ, իսկ ներքևն արևով վառած ոսկեզօծ աւազակը ոռոգում գերահրաշ մշտադալար ծաղիկները. ծաղիկնե՞ր...—սիրոյ և երջանկութեան ամենափառաւոր նշանակը չե՞ն նրանք...

Շատ ու ճոխ էին այդ ծաղիկները Սիրոյ-հովտի մէջ, բայց այդ ամենից ամենաչքնաղն ինքը Գիւլ-Խանումն էր, նրանց թագուհին. ա՜հ, նա՛ էլ էր մի ծաղիկ, բայց աւելի՛ անուշահոտ ու անթառամ, աւելի՛ քնքոյշ ու հրալի... նա նորամուտ գարնան առաջին վարդն էր, նրա պէս եթերայի՛ն, նրա պէս անհո՛գ, միամի՛տ, անմե՛ղ... նրա վարդագոյն շրթունքների մէջ դրախտ էր թագնուած, իսկ սև աչքերում, նրա շողակաթ սևսև՛ աչքերում, որ այնպէս հպարտ, սառն էին նայում սևին ու սգին, այն արևելքի արևուգիշեր ծովծով աչքերում փայլում էր մի հուր, հոգու խենթ հուրը, որ համարում են երկնքից խլած. նրանց հովանի կա-

մար յօնքերը վառվռուն նկարչի երևակայութեան ծնունդ էին կարծես. նրա ջերմ կուրծքը մի դալարագեղ վառ ծաղկաստան էր, որի վարդերի համասփիւռ բոյրը միմիայն սիրող սրտին սաղ կգար։

—Տե՛ս, դէրվի՛շ,—շարունակեց Գիւլ-Խանումը,—եթէ հեռաւորը, եթէ մութ անյայտը թախիծ է ներշնչում քո թափառող մտքին, շղթայիր ամուր այդ միտքը երկրին, և նա կարող է այստեղ սրտիս մէջ գտնել այն, ինչ որ զուր որոնում է անծանօթ վայրերում։

—Բայց...

—Ո՛չ, լսի՛ր ինձ, դու սխալւում ես, հին է քո երգը, որ շատ եմ լսել. երջանկութիւնը մի՞թէ վերջ ունի, ո՛չ, անմահ է նա։ Տե՛ս մեր սրտերը. մի՞թէ նրանց մէջ չէ բաղմած Վահի քաղցր հայեացքը. և ի՞նչ, մենք պատենք սև վարագուրով այն սուրբ հայեացքը, որ իր շողերով լուսաւորում է մեր հոգիները. և ի՞նչ, մենք ելնենք ճշմարտութեան դէմ՝ արհամարհելով ամենինչ և մեզ. ո՛չ, երկինքը չէ՞ ստեղծել մեզ համար սեւուսուգ օրեր...

—Դու յետոյ կիմանաս, կեանքիս անահ պահապան, թէ ո՞րտեղ է թափւում մարդկա-

յին արցունքը եւ ինչո՞ւ..

Այսպէս պատասխանեց հիւանդոտ դէրվիշը՝ կրծքի խորքից մի խորիմաստ հառաչանք արձակելով և ամուր սեղմեց սիրած կնոջը, ինչպէս թշնամի ցինից վախեցած թռչնիկն է կծկւում իր մօր թեւի տակ։

Ամենինչ սկսում էր կամացկամաց հանգչել. բնութեան գորշ քողը սևացնում ու սևացնում էր ցերեկն անդադար՝ իր հետ ստեղծելով լռութիւն, խորհրդաւորութիւն և ահ. միայն Սիրոյ-Հովիտն էր աւելիուաւելի բարձր ձայնել տալիս իր կրծքի վրայով հոսող անփոյթ աւազակին. լուսինն աւելի էր ճերմակում՝ երկիր իջեցնելով իր փոխ առած շողերը և խաղացնելով վճիտ կոհակների մէջ. առւակն իր մէջ գոյացրել էր մի նոր երկինք, աւելի խորհրդաւոր, քան այն, որ եթերից վեր է—աստղերի բոլոր հոյլերով և չքնաղ յաւէրժահարսով—չքեղատեսիլ լուսնով. ծաղիկները խոնարհել էին համեստ գլխիկները դէպի մայր-երկիրը՝ որպէս յոգնած մանուկն անուշ ննջելիս սիրող մօր կրծքին։ Սիրոյ-Հովիտն աւելի քան դիւթիչ էր դարձել։ Գիւլ-Խանումի հոգին դառնում էր աւելի անդուսպ կարօտող, պահանջկոտ, տենչող ու երկչոտ. ինքը չէր զգում, որ իր հոգու մէջ ևս նոյն փոփոխութիւնն էր կատարւում, ինչ որ իր շուրջը բնութեան մէջ. սիրոյ երկչոտութիւնն աւելի զօրեղ քաղցրութիւն է տալիս նրա վայելքին. և ահա Գիւլ-Խանումը խոհուն դէրվիշին փարւած՝ ծծում էր երանութեան ամբողջ լիացումը... Հեռու, տառապանք, հեռո՞ւ, մտիր այն խորշերը, որտեղ տիրում է քո սարսուկ հառաչանքը, այն սև սարսուկ-իշխանը. Սիրոյ-Հովիտը մթթէ երբևիցէ կարօտել է քեզ. այստեղ դու կեանք ունենալ չես կարող, որպէս երբէք չես ունեցել. այստեղ բազմած է քո ոխերիմ թշնամին—երջանկութիւնն իր բոլոր զօրութեամբ. բաւական է մի կրակոտ համբոյր, որ այրէ քո սև թեւերը,—մի երկրորդ համբոյր, որ մոխիր դարձնէ քեզ լիովին։

Սակայն բնութիւնն ինչպէս ազդել էր իրանով զմայլած կնոջ հոգու վրայ, նոյնպէս էր վարւել և՛ դէրվիշի հետ. գիշերը մէկին տալ էր իր թովչանքն ու խորհրդաւորութիւնը, իր նոր շողերն ու նոր հնչիւնները, իսկ միւսի հոգու թախծոտ լարերը շարժել էր իր մութ գերեզմանային սառը հոսանքով՝ զրկելով նրան

պայծառ արևի լոյսից ու ջերմից. և այն լուսինը, որ մէկին թւում էր մի հքնաղ ֆէա, միւսին յիշեցնում էր իր թշուառ մահուան գունաթափ դէմքը՝ զուրկ կեանքի վառվռուն անդարձ շողերից, դալուկ, սոսկալի... ասողները մէկին երջանիկ ժպիտներ էին երևում, զարդարուն կեանքի պչրուն ծաղիկներ սիրոյ խընջոյքում, միւսին թւում էին մահուան կերոններ՝ դագաղի շուրջը շարէշար կանգնած լուռ ու անտարբեր նրա մահուան համար, սակայն մի ներքին ճակատագրական ցաւով շտապելիս, որ իրանք էլ շուտով այրւեն ու հանգչեն դագաղի խղճուկ դիակի նման... Ու խեղճ դէրվիշի միտքը թռչում էր աւելի հեռուն, աւելի հեռուն, այնտեղ, ուր նրա մշանջենական անզգայութեան տեղն է սահմանուած մի մռայլ զօրութեամբ, այնտեղ, դէպի այն մութ առեղծուածը, այնտեղ, որտեղից էլ երբէք, երբէք չկայ վերադարձ...

Ու խորհում էր նա, խորհում, խորհում...

—Դէրվիշ, օ, զուր է այդքան մտածելը. իմ սրտից աւելի մեծ պահանջ ունես, և ահա նա քեզ է նստած ընդմիշտ,—կրկնում ու կրկնում էր Գիւլ-Խանումն իր վզին փաթաթած դող-

դոջ հոդեղէնին.—ինչու՞ ես այդպէս միշտ մտամոլոր, ինչու՞ այդպէս յաճախ պարզ ճակատդ մռայլւում է կնճիռներով։

—Ես դժբախտ չեմ, բայց... միակողմանի է իմ երջանկութիւնը։

—Դու չես հարբում այդ երջանկութեամբ։

—Ոչ... ես նրա համար դողում եմ... ես վախում եմ... Կորչելու է նա մի օր, ինչպէս ամենինչ ..

—Ի՞նչպէս... մի՞թէ ես բոլոր հոգով չեմ նստած քեզ...

—Տես... որքա՞ն թշուառներ կան երկրիս երեսին...

Այդ ժամանակ գիշերային լռութիւնը երերաց, ինչոր մի տեղից լսւեց մի տխուր, յուսահատական հնչիւն, որ տարածւելով խաղաղ օդի մէջ՝ հոսանքներ կազմեց, օդի ալիքները քուլա-քուլա իրար վրա բարձրացան, իրար գոհ տւին, հարուառաջ խաղացին, նստեցին, մեռան...

—Լսում ես, Գիւլ-Խանում, այդ հեծեծանքի թափառող խաղերը, հասկանում ես, թէ ինչ կսկիծ կայ թաղնուած նրանց մէջ, ինչ են ասում նրանք։

Գիւլ-Խանումը միայն գլուխն օրօրեց և Ժպտալով դէրվիշի դէմքին՝ գլուխն ամուր սեղմեց նրա կրծքին։ «Թող ուրիշներին, մենք երջանիկ ենք», պատասխանեցին նրա դէմքն ու աչքերը։

II.

Նրանք տուն էին վերադառնում. Գիւլ-Խանումը նոյն ծաղիկն էր, կեանքով զմայլած նոյն անհոգ-անփոյթ թռչնակը, դէրվիշը սովորականին պէս մախոհ էր. թեթև հովը երազներ էր ներշնչում նրա մէջ, կաթնագոյն եթերը թափառել էր տալիս նրա երևակայութիւնը։ Մօտիկ բլրի լանջին սպիտակին էին տալիս չիրիմների ցից-ցից քարերը, որոնք կարծես գիտամամբ ոտի էին կանգնել, որպէսզի անցորդի ուշադրութիւնն իրանց վրայ հրաւիրեն։

—Ոչքա՞ն վշտեր կան այնտեղ թաղուած, —մրմնջաց դէրվիշը.—մի՞թէ նրանք չեն եղել։

—Այո, բայց... բայց ինչո՞ւ ես այսպիսի

մռայլ պատկերներ ցոյց տալիս,—հարցրեց Գիւլ-Խանումը.—մի՞թէ կեանքում ուրախ բաներ քիչ կան. ինչո՞ւ անվերջ լալ. եթէ ապրել ենք ուզում, այսօրուան արցունքը վաղը պէտք է չորացած լինի, և... վերջ։ Եթէ մենք սկսենք տանջուել ուրիշների ցաւով, այն ժամանակ կեանքը թոյն կդառնայ. թող տանջուեն ուրիշները՝ եթէ տանջւում են, մեզ ինչ։

—«Մեզ ի՞նչ»... մի՞թէ սէրն այդքան կուրացնում է մարդիս. չէ՞ որ դու բարի ես։ «Մեզ ի՞նչ»... թէկուզ հէնց այն, որ մենք էլ կարող ենք հասնել նոյն օրին...

—Երբէ՞ք, երբէ՞ք... ինչո՞ւ մտածել դրա մասին. տես, գիշեր է, բայց վաղը կրկին պայծառ արև է ծագելու։

—Իսկ եթէ... դայ մի այնպիսի գիշեր, որին այլևս չյաջորդէ արև... Ի՞նչ...

—Այն, որ այդպիսի գիշեր չէ կարող լինել. եթէ կլինի էլ, պէտք է մոռանալ, որ լինելու է։ Խոստովանիր, բարեկամ, որ դու ինձ այնքան չես սիրում, որքան ես եմ սիրում քեզ։

—Դու ինձ սիրում ես բոլոր զօրութեամբ, իսկ ես քեզ զօրութիւնից էլ աւելի. դու հարբած ես սիրով, իսկ ես աւելի—ես ահուդողք

մէջ եմ նրա համար...

—Հեմ հասկանում։

—Տայ Աստուած, որ երբէք չհասկանաս։ Ես սխալւում էի՝ քո միտքը պղտորելով։ Թող մնայ արցունքիդ առաջին կաթիլը սև օրւան համար. եղիր երջանիկ, բայց մի հարցնիր իմ թախծի պատճառը։

Եւ այնուհետև Գիւլ-Խանումն այլևս չէր աշխատում խորամուխ լինել դէրվիշի անթափանց հոգու խորքերը։

III.

Անցաւ ժամանակը, անցաւ և ոչ դուր. ամենքի համար նա միշտ մի հետք է թողնում, ոչինչ չկայ տևական նրա առաջ։ Մեռաւ հիւանդոտ դէրվիշը, բարախելուց դադարեց այն սիրտը, որ կամենում էր կեանքը մահի հետ—երջանկութիւնը թշւառութեան հետ հաշտեցընել. շատ թանգ նստեց նրան այդ, երկու կողմից էլ հարւածներ ստացաւ, երկու կողմում էլ գործադրեց իր թոյլ ոյժերը, և ահա նրանք

սպառեցին մինչև վերջին կաթիլը...

Օրը մռայլ էր. խիտխիտ ամպերը պատել էին լեռների ծերպերից սկսած մինչև երկնքի ժպտուն երեսը, որ նրանով չարատաւորւի մարդկային արտասուքը. թաւուտ անտառում տարածւել էր մէգը՝ մի տուտը Սիրոյ-Հովտի մէջ թողնելով. ծաղիկները խոնարհւել էին անձրևի մանրիկ կաթիլների տակ և լալիս էին՝ սգով համակւած. հեռու հորիզոնում ամպերը թնդում էին խուլ ու լալագին և արտասւում Գիւլ-Խանումի նման, որը յամրաքայլ հետևում էր դէրվիշի դագաղին։ Գիւլ-Խանումն այդ ժամանակ միայն կարողացաւ հասկանալ, թէ ո՛րտեղ է բափւում մարդկային արցունքը եւ ինչո՛ւ...

Դէրվիշի աճիւններն ամփոփեցին այն սիրելի հովտում, ուր նա երջանկութեան՝ թէև վշտախառն՝ ժամեր էր ունեցել։ Եւ ամեն անգամ, երբ արևը շաւագունում էր իր մուտքի երկինքը վերջին շողերով, թախծագին կարօտը կրծում էր Գիւլ-Խանումի սիրտը, և նա, այդ բողոքի լուռ մարմնացումը Սիրոյ-Հովիտն էր շտապում, երկարերկար նստում դէրվիշի դամբարանի մօտ լուռ ու քարացած. երբեմն

էլ աչքերից անկոչ հեղուկի մի երկու կաթիլ դուրս էին ցայտում և դանդաղ գլորւում այտերի վրայով. նա համբուրում էր անձայն գերեզմանը և զարդարում ծաղիկներով, բայց նրանք կարծես այլևս այն բոյրը չունէին, որպէս առաջ: Ամենինչ կարօտում էր, մաշւում ու խեղճացած էր, ամենինչ համր տառապում էր ծանր ծանր տառապանքով:

Սիրոյ-հովտի չքնաղութեան վրայ արդէն սաւեր էր ընկել:

1566-98

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍՆԵԼՈՒ

ԼԻՕԻ՝ Թաթախման գիշեր, 5 կ.
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ՝ Վիշապ և ուրիշ զրոյցներ . . . . 5 կ.
» » » Մարդագայլը
» » » Ստամոքսի համար
և ուրիշ զրոյցներ . . կ.

Մեզնից գիրք գնողներին 30% զեղչ. ճանապարհածախսը գնողների վրա է գները կանխիկ:

Դիմել՝ Въ Тифлисъ. Тифлисскому Издательскому Т-ву.

Փող ուղարկելիս աւելացնել՝ администратору Геворку Бабурянцу.

ՀՀ Ազգային գրադարան
NL0329602

20047

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐԸ, Լէօի, գինը 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴԵՒ 1 ԱՂՋԻԿ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Մուշէ վ. 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմուածքներ, Վ. Փափազեանի . . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի . . . . . 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿԸ, Է. Օժէշկօի, թարգ. Զահվերդեանի . . . . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, Զիրվանզադէի . . . 15 կ.
7. ԵՂՕՐ ՔՈՌ ԲԱԽՏԸ, Զահրիաբի 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ, Խաչատրեանի . . . 3 կ.
9. ԴԱՆԿՕԻ ՍԻՐՏԸ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Ա. Աթայեանի . 3 կ.
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Ա. Աթայեանի . . . . 10 կ.
11. ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱՌԻՒԾԻ ՄԱՀԸ, Վ. Փափազեանի . . . . . 3 կ.
12. ՊԱՑՏԱՌԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՑ, Վ. Փափազեանի . . . . 4 կ.
13. ԽԵԼՕՔ ԱՔԱՂԱՂՆԵՐ ԵՒ ԴՐԱԽՏԸ, Վ. Փափազեանի . . . . . 5 կ.
14. ՍԻՐՈՑ ՀՈՎԻՏԸ Աբշակ Աթայեանի . 3 կ.